# ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

**Լերմոնտովո համայնքի ավագանու նիստի վերաբերյալ**

| Համայնքը | Միջոցառման անվանումը | Օրը | Ժամը | Անցկացման վայրը |
|---|---|---|---|---|
| **Լերմոնտովո** | Ավագանու նիստ | 11.06.2021թ. | 10:30 | Լերմոնտովոյի համայնքապետարանի ղեկավարի աշխատասենյակ /ԼՄ Լերմոնտովո 2խճ. թիվ5/ |

# Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. հունիսի 11-ին՝ ժամը 10.30-ին Լերմոնտովոյի համայնքապետարանում
կայանալիք համայնքի ավագանու նիստի

**<u>ժամը՝ 10.30</u>**

1.Լերմոնտովո համայնքի ավագանու 2021թ. հունիսի 11-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ. Ա.Հարությունյան

2.Լերմոնտովո համայնքի կադաստրային քարտեզագրման սխալի ուղղման մասին

զեկ. Ա.Գալուստյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

*Նախագիծ*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

11 հունիսի 2021 թվականի N 17

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 Թ-Ի ՀՈՒՆԻՍԻ 11-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Լերմոնտովո համայնքի ավագանու 2021 թ-ի հունիսի 11-ի նիստի օրակարգը:

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*

*Ա.Հարությունյանը*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լերմոնտովո համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լերմոնտովո, (0322)68570, lermontovo.lori@mta.gov.am

*Նախագիծ*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
11 հունիսի 2021 թվականի N 18

ԼԵՐՄՈՆՏՈՎՈ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՍԽԱԼԻ ՈՒՂՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 18-րդ հոդվածի 31-րդ կետով, ՀՀ ՀՕ 34-րդ և 56-րդ հոդվածներով, առաջնորդվելով "Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման իրահանգը հաստատելու մասին" ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01/06/2010 թ-ի թիվ 186-Ն հրամանի 7-րդ կետի 2-րդ ենթակետով և 9-րդ կետի 2-րդ ենթակետով, Լերմոնտովո համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Լերմոնտովո համայնքի կադաստրային քարտեզում կատարել ուղղում և 06-043-0232-0014 ծածկագրի 0.38917 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ կատարել համայնքային սեփականության իրավունքի պետական գրանցում:

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*

*Ա. Գալուստյան*